

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ՖԲԱՆՍԻԱՅՈՒՄ*

ՍԻՐԱՐՓԻ ՏԵՐ-ՆԵՐՍԵՍՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ

Հայագիտության նկատմամբ հետաքրքրությունը և հայերեն լեզվով աշխատություններ ունենալու ցանկությունն արևմտյան բոլոր երկրներից ամենավաղը Ֆրանսիայում են արտահայտվել և վառ մնացել միշտ: Դեռևս Հենրիկոս Բ-ի գրադարանն ունեցել է հայերեն մեկ ձեռագիր և երկու տպագիր գիրք, սակայն ժէ և մանավանդ ժԸ դարերում է, որ ծրագրված կերպով ձեռնարկել են հայերեն ձեռագրերի և գրքերի հավաքածու կազմելուն: Կոլբերը դեռևս 1679 թ. հանձնարարել է արևելագետ Գալլանդիոսին ձեռք բերել «հայերեն հին գրքեր, որքան հնարավոր է՝ գտնել, և մանավանդ Մովսես կոչվող ինչ-որ հեղինակի այդ լեզվով գրած պատմական գրքերը, ինչպես նաև հայերեն Աստվածաշնչի թարգմանությունները»: Կոլբերը կարողացել էր նաև Մարսելում հաստատել տալ Ամստերդամի հայկական տպարանը: 1728 և 1729 թթ. արքա Սըվենի առաքելությունն արևելքում առանձնապես արդյունավետ եղավ: Կ. Պոլսում և այլ քաղաքներում կատարված որոնումների շնորհիվ նա կարողացավ ձեռք բերել ութսուն ձեռագիր, և 1735 թ. սկսած արքա Վիլհելմի կազմել է Արքայական մատենադարանի հայերեն ձեռագրերի առաջին ցուցակը, ընդամենը հարյուր քսանութ ձեռագիր: Իր նախաբանում Վիլհելմի գրում էր. «Ահա... մեր այս ցուցակում կարծես մի նոր աշխարհ է բացվելու ընթերցողների աչքի առաջ... Այնտեղ տեսնում ենք շատ բաներ, որոնք մինչև այժմ քիչ են հայտնի եղել, բայց այնքան արժանի են հայտնի դառնալու, և որոնք փաստաբան են պատճառում, որ ավելի շատին ծանոթ չենք եղել»: Ուստի նա ջանասիրաբար ձեռնամուխ եղավ կազմելու այն աշխատությունների ցուցակը, որ պետք էր բերել տալ, և այն աշխատությունների, որ կարելի էր ընդօրինակել վենետիկի գրչագրերից: Ձեռագրերի հավաքածուն անդադար հարստացավ, և Ազգային մատենադարանի հայկական (նախկին Արքայական մատենադարանի) հավաքածուն, որն այժմ 337 ձեռագիր է պարունակում, բուն հայկական մեծ հավաքածուներից հետո ամենահարուստն է, որ գտնվում է որևէ գրադարանում:

Ծա ուզեցի վերհիշեցնել այդ հավաքածուի սկզբնավորումն ու զարգացումը, որովհետև ձեռագրերն անհրաժեշտ միջոց են ուսումնասիրությունների համար: Բուն հայագիտությունը ևս բավականին վաղ ժամանակ է սկիզբ առել: «Արևելյան կենդանի լեզուների դպրոցը» հիմնվել էր Հանրապետության Գ տարվա ժամինալ ամսի 10-ի օրենքով և երեք տարի հետո, այսինքն՝ 1798 թ. հայերենի դասընթաց էր հայտարարվել արաբերենին, պարսկերենին և թուրքերենին կից, որոնք մինչև այդ այնտեղ դասավանդված միակ լեզուներն էին: Այդ նորմուդությունը Միշագետներից եկած մի երիտասարդ հայի՝ Հակոբ Շահան

* Այս աշխատությունը պատրաստվել է Առվեստա-Ֆրանսիական պատմաբանների շորրորդ գիտական նստաշրջանի համար:

Ջրպետի նախաձեռնությամբ էր: Ջրպետի ֆբանսերեն գիտելիքների անբավարարության պատճառով այդ ուսուցումը հաջիվ սկսված՝ դադարեց և վերսկսվեց միայն 1810 թ.: Ջրպետը պաշտոնապես դասախոս նշանակվեց 1812 թ., և այդ թվականից սկսած հայերենի դասընթացները շարունակվել են անընդմեջ. նախ դասախոսել է Ջրպետը՝ մինչև 1827 թ., իսկ այնուհետև ֆրանսիացիներ՝ լը Վաան դը Ֆլորիվալ, Ժան Պոլ Դյուլորիե, Օդյուստ Կարիեր. Անտուան Մեյե, Ֆրեդերիկ Մակլեր, Ժորժ Դյուվեզիլ և ներկայումս Ֆրեդերիկ Ֆեյդի: 1926 թ. դասական հայերենի ամբիոն հաստատվեց «Կաթոլիկական ինստիտուտ»-ում, օրի առաջին դասախոսը եղավ Հ. Լուի Մարիեսը, իսկ այժմ դասախոսում է Հ. Շարլ Մերսիեն: Այսպիսով՝ Փարիզը հայերենի երկու ամբիոն ունեցող արևմտյան միակ քաղաքն է:

«Արևելյան կենդանի լեզուների դպրոցի» ընդհանուր ծրագրի համաձայն (ըստ որում դպրոցը նախ և առաջ կենդանի լեզուների դպրոց է), երեք տարիների վրա բաշխված դասընթացների հիմնական մասը արգի հայերենն է, բայց հենց երկրորդ տարվանից սկսած դասական հայերենն ուսուցվում է ժամանակակից հայերենի հետ միասին: Բացի այդ, լեզվի այդ դասընթացներին զուգահեռ ուսուցվում են նաև Հայաստանի պատմությունն ու աշխարհագրությունն ընդհանրապես: Ֆ. Ֆեյդին իր աշակերտների համար է կազմել *Manuel de la langue armenienne; Arménien occidental moderne* («Հայոց լեզվի ձեռնարկ. Արդի արևմտահայերեն») դասագիրքը. նույնպես և Հրանտ Թորոսյանը, որ երկար տարիներ հայերենի գործնական դասերի ուսուցիչ է եղել «Արևելյան լեզուների դպրոցում», մեծ մասամբ այդ նույն ուսանողների համար է կազմել իր երկու ձեռնարկները՝ «Histoire d'Arménie» («Հայոց նպատմություն») և «Histoire de la littérature armenienne, des origines Ju u'a nos jours» («Հայ գրականության պատմություն, սկզբից մինչև մեր օրերը»): «Կաթոլիկական ինստիտուտ»-ում, որտեղ ուսուցումը նույնպես բաշխված է երեք տարվա վրա, ավանդվում է միայն դասական հայերենը:

Այդ ամբիոնների հաստատումն սկզբից ևեթ մեծ թափ հաղորդեց հայագիտությանը: Դեռևս ԺԺ դարի կեսերից լույս տեսած բազմաթիվ հրատարակությունների հեղինակները «Արևելյան կենդանի լեզուների դպրոցի» դասախոսներն են եղել, կամ այնտեղ հայերեն սովորած անձինք: Աշխատել են առաջին հերթին թարգմանել միջնադարյան հայ պատմագիրների և ուրիշ հեղինակների գործերը՝ կամ առանձին կամ մի քանի հեղինակի երկեր պարունակող ժողովածուներով, ինչպիսին է 1881 թ. Վիկտոր Լանգուայի հրատարակածը՝ «Collection des historiens anciens et modernes de l'Arménie» («Հայ հին և արդի պատմագիրների ժողովածու»), «Recueil des historiens des Croisades» («Նաչափրաց արշավանքների պատմագիրների ժողովածու») մատենաշարի «Documents arméniens» («Հայկական վավերագրեր») հատորում, որը լույս է տեսել 1869 թ., Դյուլորիեն պատմագիրների և ուրիշ հեղինակների ընդարձակ հավաքածուների թարգմանություններից առաջ պետեղել է մի ներածություն՝ Կիլիկիայի հայկական թագավորության պատմության և կազմավորման մասին: Արդեն 1849 թ. նա հրատարակել էր իր «Chronologie arménienne» («Հայկական ժամանակագրության»)՝ կարևոր ուսումնասիրությունը: Հին աշխատությունների թվում պետք է հիշատակել նաև 1818 թ. Սեն-

* Այս աշխատությունը հայկական առմարների ուսումնասիրությունն է. տ. ք. Խմբ.:

Մարտինի հրատարակածը՝ „Memoires historiques et géographiques sur l'Arménie» («Պատմական և աշխարհագրական ակնարկներ Հայաստանի մասին»), որին կցված են Ստեփանոս Օրբելյանի Պատմության բնագիրն* ու թարգմանությունը և Մովսես Խորենացուն ու Վարդանին վերագրված աշխարհացույցները: Պետք է հիշատակել նաև 1863 թ. Լանգլուայի հրատարակած „Le Cartulaire de la chancellerie royale des Roupénien» («Ռուբենյանների արքայական դիվանատան վավերագրերի ժողովածուն»), որը հարստացավ հետազայում հայտնաբերված սակավաթիվ վավերագրերով միայն: Առանց նշելու ժ. դ. կամ քսաներորդի սկզբում լույս տեսած բոլոր հրատարակությունները, կարելի է ասել, որ չկա հին և կարևոր որևէ երկ, որը ֆրանսերենի թարգմանված չլիներ: Այդ թարգմանություններն իրենց արժեքով խիստ տարբերվում են, բայց միջնադարյան պատմագիրների և հայ մյուս հեղինակների դրվածքները դեռևս մեր օրերում էլ մեծ մասամբ այդ թարգմանություններով և մատչելի դառնում հայերեն չիմացող այժմյան պատմաբաններին:

Պատմագիտական հետազոտությունները թեև շանտեսվեցին, սակայն վերջին քսանհինգ կամ երեսուն տարիների ընթացքում ավելի նվազ չափով առաջ տարվեցին, քան նախկինում, ուստի այժմ ուզում եմ խոսել այդ նորագույն աշխատանքների մասին: Հրանտ Թորոսյանի վերոհիշյալ գրքուկից բացի, որպես ընդհանուր աշխատություն, ունենք Ռենե Գրուսեի «Histoire de l'Arménie, des origines a 1071» («Հայոց պատմություն, սկզբից մինչև 1071 թ.») ուսումնասիրությունը (1947 թ.), որտեղ շարադրված է հայոց պատմական զարգացումը՝ սկսած նախահայկական շրջանից, այսինքն՝ Ուրարտական պետության ժամանակներից: Գրուսեն իր մահվանից առաջ չի կարողացել ավարտել այս Պատմության երկրորդ հատորը, բայց իր մեծածավալ «Histoire des Croisades» («Խաչակրաց արշավանքների պատմություն»), ինչպես և իր «Empire du Levant» («Մերձավոր արևելքի կայսրություն») և «Empire des Steppes» («Տափաստանների կայսրություն») հատորներում մեծ տեղ էր հատկացրել Կիլիկիայի հայկական թագավորության և Մեծ Հայքի ԺԳ ու ԺԴ դարերի պատմությանը: Զանազան հանդեսներում լույս տեսած հոդվածներ վերաբերում են սահմանափակ ժամանակաշրջանների, առանձին հարցերի ուսումնասիրությանը և հարևան երկրների կամ ուրիշ ազգերի հետ Հայաստանի ունեցած հարաբերություններին: Մարիուս Կանարն այդ հարաբերությունները դարձրել է իր հետազոտությունների առարկան. քաջ տեղյակ լինելով արաբական աղբյուրներին, նա նոր փաստեր է լույս աշխարհ բերել կամ կատարել է օգտակար ճշգրտումներ: Այսպես՝ ԺԱ դ. ֆաթիմյան խալիֆ Հաֆիզի ավագ խորհրդականը դարձած հայազգի Բահրամի (Վահրամ) պատմությունը գրելիս նա նոր տեղեկություններ երևան բերեց եգիպտահայերի և Գրիգոր Բ կաթողիկոսի ճգնաժամում կատարած ճանապարհորդության մասին: Դարձյալ արաբական աղբյուրների ընձեռած տվյալներով հարուստ են նրա հոդվածները՝ „Les Hamdanides et l'Arménie» («Համդանյանները և Հայաստանը»), „Le Royaume d'Arménie-Cilicie et les Mamelouks jusqu'au traité de 1285» («Հայկիլիկյան թագավորությունը և մամլուկները մինչև 1285 թ. դաշնագիրը»), „La campagne d'Alp Arslan et la prise d'Ani en 1064» («Ալի Արսլանի արշավանքը և Անիի գրավումը 1064 թ.»), Կլոդ Կահենի աշխա-

* Խոսքը վերաբերում է Պատմության մի ընդարձակ հատվածին:

տանքները սելջուկյան թուրքերի մասին և նրա „La Syrie du nord à l'époque des Croisades et la principauté franque d'Antioche“ («Հյուսիսային Ասորիքը հաշակրաց արշավանքների ժամանակ և Անտիոքի ֆրանկ իշխանությունը») աշխատությունը թեև անմիջականորեն հայերին չի վերաբերում, սակայն նույնպես արժեքավոր տեղեկություններ է ի հայտ բերում՝ մասամբ մահմեդական աղբյուրների հիման վրա: Հայկ Պերպերյանի հետազոտությունները շոշափում են հայոց պատմության առանձնահատուկ կողմերը. ձեռագրերի հիշատակարանների տվյալներով նա, շատ հաճախ, ճշգրտել է կամ լրացրել հայ պատմագիրների տեղեկությունները և վերջիններս համեմատել օտար աղբյուրների հետ: Այսպես՝ նա ցույց է տվել, որ ԺԱ գարի վերջում Անանիա կաթողիկոսի պառակտումը մասամբ բացատրվում է պատմական հանգամանքներով և Իկոնիոնի սուլթանի գործադրած անշունչությունով, որ Կարսի թագավորության՝ Բյուզանդիային թողնվելու գլխավոր պատճառը եղել է Կարսի Գագիկ թագավորի ցանկությունը՝ դրանով իսկ ձեռք բերելու մի նոր կաթողիկոսի ընտրության հավանություն, որին ընդդիմանում էին բյուզանդացիները: Նա ճշգրտել է թուրքական գրավումից հետո Կ. Պոլսի հայոց պատրիարքության հաստատման թվականը և ցույց տվել, որ Պերիբեպտոսի բյուզանդական եկեղեցին հայերին է տրվել 1461 թ. և դարձել հայ պատրիարքության աթոռանիստը: Է դարի Հայաստանում լափագիտական, տիեզերագրական և ժամանակագրական ուսումնասիրությունների նախաձեռնող Անանիա Շիրակացու ընդարձակ ինքնակենսագրության թարգմանությամբ նա առիթ է ընծայել լրմերին՝ քննարկելու դրա պարունակած պատմական տվյալները Անանիայի հույն ուսուցիչ՝ գիտնական Տյուբիկոսի, վերջինիս ղեկավարական գործունեության և, ի միջի այլոց, Հովհաննես զորավարի մասին, որի օրոք երիտասարդ Տյուբիկոսը ծառայել է Հայաստանում:

Շուտով պետք է լույս տեսնի „L'Histoire de l'Arménie, de l'avènement des Sassanides à la conversion du royaume“ աշխատությունը. դա օրնորդ Շոմոնի դոկտորական աշխատությունն է, որ նա ներկայացրել էր մի քանի տարի առաջ և ապա լրացրել է:

Պատմագիտական աշխատությունների մասին այս ակնարկն ավարտելուց առաջ թող թույլ տրվի ինձ հիշատակել ամերիկյան «The History of the Crusades» («հաշակրաց արշավանքների պատմությունը») հրատարակության երկրորդ հատորում Կիլիկիայի պատմության մասին իմ գրած գլուխը, թեև ես այդ աշխատանքը կատարել եմ Ֆրանսիա վերադառնալուց առաջ:

Մեծ բանասեր Անտուան Մեյեի հաղորդած թափի շնորհիվ՝ լեզվաբանությունը շարունակում է կարևոր տեղ գրավել ֆրանսիացի հայագետների աշխատանքներում: Այստեղ ավելորդ կլիներ հիշեցնել Մեյեի հիմնական նպաստը հայ լեզվաբանությանը. նրա աշխատանքները քաջ հայտնի են Հայաստանում, որտեղ դրանց շարունակողն է եղել նրա աշակերտ, լեզվաբան և բանասեր Հր. Աճառյանը: Նվաղ կարևոր չէ է. Թենվենիստի նպաստը. դասական հայերենի հնչյունաբանության և շարահյուսության, հայերենում պարթևական ուարների կամ փոխառյալ իրանական բառերի, անվանական զանազան կոմպոզիցիաների կամ հայերենի բարդ բառերի մասին նրա ուսումնասիրությունները հեղինակություն են վայելում: Ժ. Դյումենիլը, որ նույնպես լեզվաբանական կարևոր ուսումնասիրություններ է հրատարակել դասական հայերենի վերաբերյալ, ինչպես և՛ հայկական առասպելների և դիցաբանության մասին, վերջին

տարիներս իր ուշադրությունը կենտրոնացրել է բարբառների վրա: Նա առանձնապես հետաքրքրվել է Մուսա լեռան հայերի բարբառով, Համշենի մահմեդական հայերի խոսած լեզվով, որոնցից նա զրի է առել և թարգմանել բազմաթիվ պատմվածքներ: Մեյլի աշակերտ Հ. Մարիեսի լեզվաբանական ուսումնասիրությունները վերաբերում են դասական շրջանին, սակայն այն հետազոտությունները, որոնք նրան շատ ավելի են հետաքրքրել որպես հայագետի, նվիրված են հինդերորդ գարի մեծ մատենագիր Եղնիկ Կողբացուն:

1924 թ. նա հրատարակեց իր «Le De Deo d'Eznik de Kolb connu sous le nom de Contre les sectes; Études de critique littéraire et textuelle» («Եղնիկ Կողբացու Յաղագս Աստուծոյ երկը, որ հայտնի է Ընդդեմ աղանդոց խորագրով. Մատենագրական և բնագրագիտական ուսումնասիրություններ») գիրքը: Հ. Մարիեսն իրավամբ գտնում էր, որ Եղնիկի երկը՝ գրված հայկական աշուրների գյուտից մի քառասուն տարի հետո, 441—448 թթ. միջև, առաջնակարգ տեղ է գրավում հայ մատենագրության մեջ թե՛ իր լեզվով և թե՛ իր բովանդակությամբ, և (ներառյալ խոսքերն եմ մեջբերում) «Եղնիկին ապահովում է այն անխառն ու հարատև փառքը, որ անբաժան է մեծ գրողների անունից, ինչպես նաև կարևոր տեղ եկեղեցու հայրերի շարքում»: Հ. Մարիեսի կարծիքով, Եղնիկի երկը էապես հույների, պարսիկների և մարկիոնականների դեմ ուղղված վիճաբանական ճառերի գիրք չէ, այլ առաջին հերթին ճառ է աստուծո մասին, «որի մեջ դրական դրույթների առիթով հերքվում են հակառակորդների այս կամ այն տեսակետները»: Այդ է պատճառը, որ նա նախընտրեց, այդ երկն անվանել «De Deo» («Յաղագս Աստուծոյ»): Եղնիկի քննական բնագիրն ու ֆրանսերեն թարգմանությունը, որ նա ավարտել էր իր մահվանից (1958 թ.) առաջ, հրատարակվեցին նրա աշակերտ Հ. Մերսիեի ջանքերով:

Վերջին տարիներս հրատարակվել կամ թարգմանվել են բնագիր մի քանի աշխատություններ: Հ. Պերպերյանը հրատարակել է (առանց թարգմանության) Վարդան վարդապետի «Աշխարհացոյց»-ը: Այս քննական հրատարակությունը կատարվել է քսանչորս ձեռագրերի և նախորդ տպագրությունների հիման վրա: Այդ աշխարհացոյցի հեղինակը, ամենայն հավանականությամբ, ԺԳ դարի պատմագիր Վարդան Արևելցին է և ոչ թե Վարդան Բարձրբերդցին, ինչպես կարծում էր նրա առաջին հրատարակիչ Սեն-Մարտենը: Այս Աշխարհացոյցը մեղ հասել է երկու խմբագրությամբ՝ ընդարձակ և համառոտ: Ըստ երևույթին, վերջինս ավելի է մոտ սկզբնագրին: Մյուս երկու հրատարակությունները թարգմանություններ են առանց սկզբնագրի:

1953 թ. Լյուկ Անդրե Մարսելը թարգմանել է Ժ դարի եղբերգակ բանաստեղծ Գրիգոր Նարեկացու տաղերի մի հատընտիր: «Մատեան ողբերգութեան»-ի լրիվ թարգմանությունը («Livres des Prières»), որ բովանդակում է քնարերգական մեծ ներշնչմամբ գրված 95 թախծական բանաստեղծություններ, հաջողությամբ գլուխ է բերել Հ. Քեշիշյանը, իսկ նրա ընդարձակ նախաբանում Հ. Մըսրըյանը ուսումնասիրել է Գրիգոր Նարեկացու ստեղծագործությունն ամբողջությամբ և Հայաստանի Ժդ. պատմական և կրոնական իրավիճակը: Հրատարակվելով «Sources Chrétiennes» («Քրիստոնեական աղբյուրներ») մատենաշարում, «Մատեան ողբերգութեան»-ը դրանով՝ սեփականությունը դարձավ ընտիր հասարակայնության:

Յ. Ֆեյդին կատարել է «Մասունցի Դավիթ» էպոսի թարգմանությունը («David de Sassoun»): Ժ գ. ժագած այդ էպոսը, որ պատմում է հերոսների

տանքները սելջուկյան արշավանքների (que des Croisades) սային Ասորիքը հախանությունը») աշիրում, սակայն նույն սասք մահմեդական տությունները շուշալ ձեռագրերի հիշատակամ լրացրել հայ պատեղ օտար աղբյուրն Անանիա կաթողիկոս հանգամանքներով և թագավորության՝ Բյկարսի Գագիկ թագուկաթողիկոսի ընտրողացիները: Նա ձեզրտրիարքության հաստուզանդական եկեղեցին թյան աթոռանիստը: կան և ժամանակագրՇիրակացու ընդարձաընծայել լըմերին՝ քնԱնանիայի հույն ուսողործունեության և, իերիտասարդ Տյուբիկու

Շուտով պետք է ment des Sassanides օրնորդ Շոմոնի գոկտոքանի տարի առաջ և

Պատմագիտական լուց առաջ թող թույլ ս Crusades» («խաչակրսերկրորդ հատորում Կիլայդ աշխատանքը կաս

Մեծ բանասեր Անությունը շարունակում է և տանքներում: Այստեղ և հայ լեզվաբանությանը: որտեղ դրանց շարունակ Աճառյանը: Նվազ կարհ հնչյունաբանության և շկամ փոխառյալ իրանաների կամ հայերենի բաղինակություն են վայելրևոր ուսումնասիրությունյալ, ինչպես և՝ հայկակ

չորս սերունդների սխրագործությունները. պահպամամբ: Հովսեփ Օրբելու ղեկավարությամբ մի քալրիվ բնագիրը լույս է տեսել Երևանում 1939 թ. և կությունից է կատարել թարգմանությունը, որին նախաբանը:

Ուրիշ շատ բնագրեր, որոնք հրատարակված կ ֆրանսերենի, իրենք արդեն հունական կամ ասորյություններ են: Առաջինները կատարվել են Զ և է գղկողմից. դրա առանձնատկությունն այն է, որ լեվրվել է հունարեն բնագրի լեզվի վրա: Բոլոր նրա աշխատություններով, ուշագրություն են հրավիրվրա, որ կարող է մատուցել հայ թարգմանական տակարարությունը զգացվում է ոչ միայն բնագրի բան, որ հաճախ է պատահում). նույնիսկ երբ այրող գիտակցաբար հրաժարվել հայերեն թարգմանություն, որը կատարվել է այսօր մեր ձավելի հին ձեռագրերից: Վերջին տարիներում տեղալներն են. իրենեոս Լուգդունացու «Յոյցք առալկը, որի անունը հունական գրականությանը հայտնիցուցմունքով միայն, հայերենից ֆրանսերենի թկողմից՝ «La Démonstration de la prédication իրենեոս Լուգդունացու «Ընդդէմ հերձուածոց» երբնագիրը պահպանվել է միայն սակավաթիվ հական հրատարակությունը կատարվել է հայերեն թյունների հիման վրա, և Հ. Մերսիեն լույս ընծալ ֆրանսերենի փոխադրումը:

Հ. Մարիեսը և Հ. Մերսիեն հրատարակել են «Օրհնութիւնք Իսահակայ, Յակորայ և Մովսիսի» ընթեր ֆրանսերեն թարգմանությամբ («Les Beiet de Moïse»). Իսահակի և Հակորի օրհնութիգիրը պահպանվել է. սակայն, ինչպես նկատել հայերեն թարգմանության ենթադրել տված հմասերում եղել է ավելի լավ, քան հունարեն այն ձեռքում: Իսկ Մովսեսի օրհնությունը պահպանվությունամբ և մի վրացերեն թարգմանությամբ, և հերթին հայերենից կատարված թարգմանություն

Այս շարքին տատկանող մյուս երկու հրաբնագրերի թարգմանություններ են: Հ. Մարիեսը են Եփրեմ Ասորու (Եփրեմ Մծրնացի) «Կցուրդլընթեր լատիներեն թարգմանությամբ («Hymnes Այս կցուրդները պահպանվել են միայն հայեր Ասորու «Մեկնութիւն համաբարբառ աւետարանի էր միայն հայերեն թարգմանությամբ: Հ. Լըլ ֆրանսերեն թարգմանությունը («Commentaire Diatessaron»). նույնիսկ ասորերեն սկզբնաղբ

ի իր րանավորայերեն թարգմանությունը պահում է իր լիակատար արժեքը, որով-
րանասերների մեզ տալիս է ոչ միայն ամբողջական բնագիրը, այլև օգնում է նաև
նևյդին այդ հրապարակու ասորերենի վերծանման սխալները:

որդում է հենց *logia Orientalis*» («Արևելյան հայրախոսություն») և «Sources

35» («Քրիստոնեական աղբյուրներ») հավաքածուներում լույս տես-
նալիս թարգմա հրատարակությունները նպաստել են ոչ-հայագետ բանասերներին
նև կրկերի թախու հայերեն թարգմանական դրականության արժեքն ու կարևո-
նարան կոչվա՝ նույնիսկ հայագետների համար էլ հայերեն թարգմանությունների
հղատորեն պահատարակությունները, թարգմանություններին ուղեկցող լեզվա-
որոնք զբաղվաբաղմաթիվ դիտողությունները արժեքավոր արդյունքներ են տալիս
այն ծառայուկոչված դպրոցի լեզվի ուսումնասիրության համար:

կանությունը՝ մանական գրականության մեջ պետք է դասել նաև հայերեն ժամա-
ծ լինելու դեպ գիրքը, որ մանրամասն ուսումնասիրել է տեր Ռենոն: Հունարենից
ություն ունի, ություն հանդիսացող այդ գիրքը Ե. Երուսաղեմում եկեղեցական
ության վկայության տարվա գոյության լավագույն ապացույցներից մեկն է:
տակ եղած սեղի՝ քանի որ այդ բնագիրը պաշտամունքային հայկական տարվա
ոարակված երկնած, տեր Ռենոնի համար այն ելակետ է հանդիսացել հայկական
ան քարոզության պաշտամունքի վերաբերյալ հետազոտությունների համար:

վսերիոս Կեսայտեմիլ նաև հայկական արվեստի ուսումնասիրությունը: Ծարտա-
անվեց Հ. Ֆրդան պատմության բնագավառում առաջին հերթին պետք է հիշեցնել
postolique». Հատրյանի աշխատանքները՝ Նա մահացավ իր ուժերի ծաղկուն
րրորդ դրքի Համառոտ, բայց բովանդակալից իր առաջին աշխատության մեջ՝ նա
ներով: Այդ երկական ճարտարապետության մի ընդհանուր ակնարկ. այնուհետև,
տիններեն թա հոգվածներով նա ուսումնասիրեց դրա առանձին կողմերը: Մա-
սյերեն թարգմ է 1965 թ. նրա պաշտպանած աշխատությունը՝ «L'Architecture

du IV au VII siècle» («Դ—է դարերի հայկական ճարտարապե-
պաղդիտոս Հ»), Հայաստանում և Թուրքիայի հայկական նահանգներում կատա-
հայերեն բնա՝ ճանապարհորդություններից բժիշկ Թիերին և տիկինը արժեքավոր
lons d'Isaac, ի բերել դժվարամատչելի շրջաններում գտնվող հուշարձանների և
ի հունարեն նոթ կամ նույնիսկ անծանոթ եկեղեցիների մասին: Դրանից բացի՝
ալիս հրատարակն հոգվածներ է հրատարակել Վասպուրականի նահանգի և Կարսի
են լեզուն ընդեցիների և վանքերի մասին, իսկ տիկին Թիերին մի ուսումնա-
լում, որն այժմ նվիրել Տաթևի եկեղեցում պահպանված Վերջին դատաստան՝ մեծ
իայն հայերենին, որը, նրա կարծիքով, ժ դարի մի արևմտյան նկարիչի գործ է:
րիշ բան չէ, ինձ հիշատակել նաև, բացի Աղթամարի եկեղեցու վերաբերյալ իմ

ուններից և հայկական ձեռագրացուցակներից, որոնք լույս են
կությունները լիկայում և Դուբլինում, հայկական արվեստի մասին վերջերս հրա-
Մերսին հրողվածներս «Dictionnaire de l'art et des artistes»-ում («Արվեստի
հայերեն բնագրանների բառարան»), «Encyclopaedia Universalis»-ում («Հա-
int Ephrem lehen հանրագիտարան») և զանազան հանգեսներում:

սրգմանությամբ. նշել նաև, որ Ֆրանսիայում համալսարանական ուսուցման մեջ
կը մինչև 1957 սվելի կարևոր տեղ է հատկացվում հայկական արվեստին: Նախորդ
հրատարակեցուցըում Լասուսը և «Բարձրագույն ուսմանց դպրոցում» («Ecole
Evangile conc Etudes») նրա դասընթացին հետևողները հատկապես ուսումնա-
մասի հայտնի կական ճարտարապետության հետ առնչվող հարցեր: 1963—

չորս սերունդների սխրագործությունները. պահպանվել էր բանավոր ավանդմամբ: Հովսեփ Օրբելու ղեկավարությամբ մի քանի բանասերների կազմած լրիվ բնագիրը լույս է տեսել Երևանում 1939 թ. և Տ. Ֆեյդին այդ հրատարակությունից է կատարել թարգմանությունը, որին նախորդում է հենց Օրբելու նախաբանը:

Ուրիշ շատ բնագրեր, որոնք հրատարակված կամ միայն թարգմանված են ֆրանսերենի, իրենք արդեն հունական կամ ասորական երկերի թարգմանություններ են: Առաջինները կատարվել են Զ և է դդ. հունարան կոչված դպրոցի կողմից. դրա առանձնահատկությունն այն է, որ լեզուն ճշգրտորեն պահպանվում է հունարեն բնագրի լեզվի վրա: Բոլոր նրանք, որոնք զբաղվել են այդ աշխատություններով, ուշադրություն են հրավիրել այն ծառայությունների վրա, որ կարող է մատուցել հայ թարգմանական գրականությունը: «Դրա օգտակարությունը զգացվում է ոչ միայն բնագրի կորած լինելու դեպքում (մի բան, որ հաճախ է պատահում). նույնիսկ երբ այն գոյություն ունի, չենք կարող գիտակցաբար հրաժարվել հայերեն թարգմանության վկայությունից, թարգմանություն, որը կատարվել է աշուր մեր ձեռքի տակ եղած սկզբնագրի ավելի հին ձևագրերից»: Վերջին տարիներում հրատարակված երկերը հետևյալներն են. Իրենեոս Լուզդունացու «Տույցք առաքելական քարոզության» երկը, որի անունը հունական գրականությանը հայտնի էր Եվսեբիոս Կեսարացու մեկ ցուցմունքով միայն, հայերենից ֆրանսերենի թարգմանվեց Հ. Ֆրուադըվոյի կողմից՝ «La Démonstration de la predication apostolique». Նույնպես՝ Իրենեոս Լուզդունացու «Ընդդեմ հերձուածոց» երկի չորրորդ գրքի հունարեն բնագիրը պահպանվել է միայն սակավաթիվ հատվածներով: Այդ երկի բնական հրատարակությունը կատարվել է հայերեն և լատիներեն թարգմանությունների հիման վրա, և Հ. Մերսիեն լույս ընծայեց հայերեն թարգմանության ֆրանսերենի փոխադրումը:

Հ. Մարիեսը և Հ. Մերսիեն հրատարակել են Հիպպոլիտոս Հռոմայեցու «Օրհնությունք Իսահակայ, Յակոբայ և Մովսիսի» երկի հայերեն բնագիրը՝ առընթեր ֆրանսերեն թարգմանությամբ («Les Bénédiction d'Isaac, de Jacob et de Moïse»). Իսահակի և Հակոբի օրհնությունների հունարեն սկզբնագիրը պահպանվել է. սակայն, ինչպես նկատել են տալիս հրատարակիչները, հայերեն թարգմանության ենթադրել տված հունարեն լեզուն բնագրի շատ մասերում եղել է ավելի լավ, քան հունարեն այն բնագրում, որն այժմ կա մեր ձեռքում: Իսկ Մովսեսի օրհնությունը պահպանվել է միայն հայերեն թարգմանությամբ և մի վրացերեն թարգմանությամբ, որն ուրիշ բան չէ, և՛ իր հերթին հայերենից կատարված թարգմանություն:

Այս շարքին պատկանող մյուս երկու հրատարակությունները ասորերեն բնագրերի թարգմանություններ են: Հ. Մարիեսը և Հ. Մերսիեն հրատարակել են Եփրեմ Ասորու (Եփրեմ Մծբնացի) «Կցուրդների» հայերեն բնագիրը՝ առընթեր լատիներեն թարգմանությամբ («Hymnes de saint Ephrem le Syrien»). Այս կցուրդները պահպանվել են միայն հայերեն թարգմանությամբ, Եփրեմ Ասորու «Մեկնութիւն համաբարբառ աւետարանի» երկը մինչև 1957 թ. հայտնի էր միայն հայերեն թարգմանությամբ: Հ. Լըլուարը հրատարակեց հայերենի ֆրանսերեն թարգմանությունը («Commentaire de l'Évangile concordant ou Diatessaron»). Նույնիսկ ասորերեն սկզբնագրի մի մասի հայտնաբերումից

հետո էլ հայերեն թարգմանությունը պահում է իր լիակատար արժեքը, որովհետև այն մեզ տալիս է ոչ միայն ամբողջական բնագիրը, այլև օգնում է նաև երբեմն սրբագրելու ասորերենի վերծանման սխալները:

«Patrologia Orientalis» («Արևելյան հայրախոսություն») և «Sources Chrétiennes» («Քրիստոնեական աղբյուրներ») հավաքածուներում լույս տեսնելով՝ այդ հրատարակությունները նպաստել են ոչ-հայազետ բանասերներին ծանոթացնելու հայերեն թարգմանական գրականության արժեքն ու կարևորությունը: Նույնիսկ հայազետների համար էլ հայերեն թարգմանությունների քննական հրատարակությունները, թարգմանություններին ուղեկցող լեզվաբանական բազմաթիվ դիտողությունները արժեքավոր արդյունքներ են տալիս հունարան կոչված դպրոցի լեզվի ուսումնասիրության համար:

Թարգմանական գրականության մեջ պետք է դասել նաև հայերեն ժամասացության դիրքը, որ մանրամասն ուսումնասիրել է տեր Ռընոն: Հունարենից թարգմանություն հանդիսացող այդ գիրքը Ե. Երուսաղեմում եկեղեցական պաշտամունքային տարվա գոյության լավագույն ապացույցներից մեկն է: Մյուս կողմից՝ քանի որ այդ բնագիրը պաշտամունքային հայկական տարվա հիմքում է ընկած, տեր Ռընուի համար այն ելակետ է հանդիսացել հայկական եկեղեցական պաշտամունքի վերաբերյալ հետազոտությունների համար:

Չի անտեսվել նաև հայկական արվեստի ուսումնասիրությունը: Ճարտարապետության պատմության բնագավառում առաջին հերթին պետք է հիշեցնել Արմեն հաշատրյանի աշխատանքները: Նա մահացավ իր ուժերի ծաղկուն շրջանում: Համառոտ, բայց բովանդակալից իր առաջին աշխատության մեջ՝ նա տվել էր հայկական ճարտարապետության մի ընդհանուր ակնարկ. այնուհետև, բազմաթիվ հոդվածներով նա ուսումնասիրեց դրա առանձին կողմերը: Մամուլի տակ է 1965 թ. նրա պաշտպանած աշխատությունը՝ «L'Architecture arménienne du IV au VII siècle» («Դ—է դարերի հայկական ճարտարապետությունը»): Հայաստանում և Թուրքիայի հայկական նահանգներում կատարած իրենց ճանապարհորդություններից բժիշկ Թիերին և տիկինը արժեքավոր փաստեր են բերել դժվարամատչելի շրջաններում գտնվող հուշարձանների և սակավածանոթ կամ նույնիսկ անծանոթ եկեղեցիների մասին: Դրանից բացի՝ բժիշկ Թիերին հոգվածներ է հրատարակել Վասպուրականի նահանգի և Կարսի շրջանի եկեղեցիների և վանքերի մասին, իսկ տիկին Թիերին մի ուսումնասիրություն է նվիրել Տաթևի եկեղեցում պահպանված «Վերջին դատաստան» մեծ-որմնանկարին, որը, նրա կարծիքով, Ժ դարի մի արևմտյան նկարիչի գործ է: Թույլ տվեք ինձ հիշատակել նաև, բացի Աղթամարի եկեղեցու վերաբերյալ իմ աշխատություններից և հայկական ձեռագրացուցակներից, որոնք լույս են տեսել Ամերիկայում և Դուբլինում, հայկական արվեստի մասին վերջերս հրատարակած հոդվածներս «Dictionnaire de l'art et des artistes»-ում («Արվեստի և արվեստագետների բառարան»), «Encyclopaedia Universalis»-ում («Համաշխարհային հանրագիտարան») և զանազան հանդեսներում:

Պետք է նշել նաև, որ Ֆրանսիայում համալսարանական ուսուցման մեջ հետդհետե ավելի կարևոր տեղ է հատկացվում հայկական արվեստին: Նախորդ տարվա ընթացքում Լասուար և «Բարձրագույն ուսմանց դպրոցում» («Ecole des Hautes Etudes») նրա դասընթացին հետևողները հատկապես ուսումնասիրեցին հայկական ճարտարապետության հետ առնչվող հարցեր: 1963—

1965 թթ. «Բարձրագույն ուսմանց դպրոցում» ինքս էլ մի շարք դասախոսություններ եմ կարդացել հայկական նկարչության և քանդակագործության մասին. 1967 թ. դասախոսությունների մի շարք էլ կարդացել եմ Պուատիեի համալսարանի «Centre d'Etudes superieures de civilisation medievale»-ում («Միջնադարյան քաղաքակրթության բարձրագույն ուսմանց կենտրոն»), իսկ նախքան այդ՝ 1959 թ. «Collège de France» ուսումնական հաստատությունը ինձ հրավիրել էր դասախոսություններ կարդալու Հայաստանի և խաչակրաց արշավանքների մասին. գրանցից մի քանիսը վերաբերում էին կիլիկյան թագավորության արվեստին: Այս դասախոսությունները հիշատակում եմ լոկ ցույց տալու համար այն հետաքրքրությունը, որ բարձրագույն ուսումնական այդ տարբեր հաստատությունները ցուցաբերում են հայկական արվեստը ծանոթացնելու ուղղությամբ:

Ֆրանսիայում հայագիտության այս ընդհանուր պատկերի մեջ միանգամայն առանձնահատուկ տեղ պետք է հատկացնել «Revue des Etudes Arméniennes»-ին («Հայագիտական հանդես»), որի տնօրենն է «Խնստիտուտ»-ի անդամ, «Կոլեժ գը Ֆրանս»-ի դասախոս է. Բենվենիստը. իսկ խմբագրության շատ գործունյա քարտուղարն է Հայկ Պերպերյանը: Խմբագրական կազմի մեջ են «Խնստիտուտ»-ի ուրիշ անգամաներ, «Կոլեժ գը Ֆրանս»-ի, «Սորբոն»-ի և բարձրագույն ուսումնական այլ հաստատությունների դասախոսներ. որոնք ներկայացնում են հայագիտության տարբեր ճյուղերը, ինչպես նաև զանազան բնագավառների մշակույթները, որոնցով սնվել է Հայաստանի պատմությունը: Այս հանդեսը, որ, ավելի քան երեսուն տարվա զազարից հետո, 1964 թ. վերսկսեց հրատարակվել, եվրոպական լեզվով միակ գիտական պարբերականն է՝ նվիրված միմիայն Հայաստանին վերաբերող ուսումնասիրություններին: Առաջին հատորի նախաբանում է. Բենվենիստը գրում է. «Հանդեսը, որ լայնորեն բաց է բոլոր երկրների գիտնականների առջև, հրատարակելու է հետազոտությունների բոլոր ճյուղերին վերաբերող գիտական հոդվածներ՝ լեզվաբանություն և բանասիրություն, պատմություն և հնագիտություն, բանահյուսություն և ազգագրություն, ամենալայն և, միաժամանակ, բազմաբովանդակ հեռանկարով, ընդգրկելով հայկական քաղաքակրթության հարաբերությունները հարևան երկրների հետ: Նշանակալից տեղ է հատկացվելու Հայաստանում լույս տեսած և այդ պատճառով արևմտյան գիտնականներից շատերին անմատչելի աշխատությունների թարգմանություններին»: Այդ ծրագիրը լայնորեն իրագործվել է, և հանդեսը ինչ-որ չափով դարձել է միջազգային պարբերական, որի էջերում լույս են տեսնում եվրոպական տարրեր երկրների և Միացյալ Նահանգների գիտնականների աշխատանքներ, և որն իր գոյությամբ իսկ խրախուսում ու առաջ է քաշում գիտության ամենադիտնազան ճյուղերին վերաբերող հետազոտությունները: Հրատարակելով հայ և ռուս գիտնականների գործեր, գրախոսելով հայերեն լեզվով լույս տեսնող աշխատություններ, տալով տպագրված բոլոր հոդվածների, այդ թվում և «Բաների Մատենագրանի»-ի մատենագիտական ցանկը, «Revue des Etudes Arméniennes»-ը դարձել է արևմտյան հայագետների և հայ գիտնականների գիտական ամենակարևոր կապը:

АРМЕНОВЕДЕНИЕ ВО ФРАНЦИИ

СИРАРПИ ТЕР-НЕРСЕСЯН
Иностранный член АН Арм. ССР

Резюме

В данной статье вкратце излагается история арменоведения во Франции начиная с XVII века, когда (в 1679 г.) Кольбер поручил востоковеду Голланду собирать армянские манускрипты. С этих пор был основан фонд армянских рукописей Королевской библиотеки Парижа (ныне Национальная библиотека), насчитывающий в настоящее время 337 рукописей. С 1798 г. учрежден курс армянского языка в Парижской «Школе живых восточных языков», где первым преподавателем был армянин Шахан-Джрпет. Эта школа действует до сих пор, где преподают французы (в настоящее время армянский язык преподает Ф. Фейди). С 1926 года параллельно существует кафедра армянского языка также и при «Католическом институте».

Арменоведение во Франции развивается в особенности с середины XIX столетия, охватывая историю, языкознание, искусство и т. п. Большую роль в деле переводов и изданий армянских исторических источников сыграли Э. Дюлорье, В. Ланглуа, Ж. Сэн-Мартэн; а в наши дни проблемами истории армянского народа занимаются Р. Груссе, М. Канар, А. Берберян и др. В области изучения армянского языка огромную работу проделал известный филолог А. Мейе. Ученик же его Л. Мариес исследовал «Опровержение ересей» Езника Колбского. Л. А. Марсель перевел на французский язык отрывки из «Книги скорбных песнопений» Григория Нарекского, но полный перевод ее осуществил Г. Кешишян. Ф. Фейди издал в французском переводе эпос «Давид Сасунский».

Предметом особого внимания стали те армянские переводы в VI—VII вв. с греческого и сирийского, оригиналы которых утрачены частично или вообще. Из них в французском переводе изданы два произведения Иринея Лугдунского усилиями Фруадево и Мерсье. К числу подобных работ, восходящих к сирийскому оригиналу, принадлежат «Гимны» и «Диатессарон» Ефрема Сирина, исследованные Мариесом, Мерсье и Лелуаром. Ныне издается «Армянская архитектура IV—VII вв.» Армена Хачатуряна. Ценные материалы об армянских архитектурных памятниках, находящихся в Армении и армянских виллайетах Турции, собраны супругами Тьеры.

Автором данной статьи были опубликованы на французском языке исследования об ахтамарской церкви, а также каталоги армянских рукописей с миниатюрными изображениями и множество статей в европейских специальных энциклопедиях.

Автор статьи в частности обращает внимание на периодическое издание «Revue des Etudes Arméniennes» (Арменоведческий ежегодник), освещающее исключительно проблемы истории армянского народа и его культуры. «Revue» одновременно является непосредственной связью между зарубежными учеными и учеными Армении.